ԱՉԱԼՈՒՐՋ ԼԻՆԵՆՔ ԱՉՔԵՐԻ ԽՆԱՄՔԻՆ

Նպատակ

Աջակցել **Հայ Օգնության Ֆոնդի (ՀՕՖ)** բարեգործական ճաշարանների շահառուների առողջական խնդիրների թեթևացմանը՝ ապահովելով աչքերի ավելի լավ խնամք:

Գործողություններ

- Անցկացնել անվճար աչքի տեսողության ստուգում ՀՕՖ-ի բարեգործական ճաշարանների 781 շահառուի համար
- Պատվիրել և տրամադրել ակնոցներ այն բոլոր շահառուներին, որոնք կունենան դրա կարիքը
- Կրիտիկական վիճակների դեպքում կազկամերպել աչքի բուժման անվճար միջամտություն **AECP՝ Հայաստանի Աչքի Խնամքի Ծրագրի** հետ համագործակցությամբ

Ծրագրի նկարագրությունը

Հայաստանի բնակչությունը բաղկացած է տարբեր խմբերից, որոցից մեկն էլ կազմում են աղքատության մեջ ապրող մեծահասակները: Չնայած այն բանին, որ այդ ծերերից շատերը ունեցել են բավականին արժանապատիվ կյանք, տարիների ընթացքում եւ հանգամանքների փոփոխության արդյունքում, այժմ նույնիսկ օրվա հացն ապահովելը դարձել է դժվարություն: 1995թ.-ից ի վեր ՀՕՖ-ը փորձում է այս խնդրին լուծում տալ, ապահովելով աղքատության հասած ծերերին և այլոց ավելի արժանապատիվ կյանքով՝ նպատակ դնելով կանխել հասարկությունից մեկուսանալու վտանգը: Ներկայումս ավելի քան 781 շահառու՝ ընտանիքներ, երեխաներ և մեծահասակներ, հաճախում են ՀՕՖ-ի 5 բարեգործական ճաշարանները, որոնք գտնվում են Երևանում, Գյումրիում, Նոր Հաճնում, Բյուրեղավանում և Բերդում: Այս ճաշարաններից յուրաքանչյուրը շաբաթական 5 օր տրամադրում է տաք և սննդարար կերակուր: Ի լրումն այս ամենին, ճաշարանը նաև հանդիսանում է համայնքի հավաքների և ապաստարանի վայր:

Մեծահասակներին անհանգստացնող խնդիրներից մեկը աչքի տեսողության վատթարացումն է: Իսկ տվյալ խավի համար աջակցություն սովորաբար չկա, ինչն էլ արդյուքում հանգեցնում է հաշմանդամության:

Այո-ն, Հայաստանի Աչքի Խնամքի Ծրագրի Armenian Eye Care Project - AECP հետ համատեղ սկսում է մի ծրագիր, որի շնորհիվ ՀՕՖ-ի բարեգործական ճաշարանների 781 շահառուի համար կանցկացվեն աչքի տեսողության անվճար ստուգումներ: Ստուգումների արդյունքում շահառուները անվճար կստանան ակնոցներ:

Մինչդեռ մենք աշխատում ենք բարելավել ապագան Հայաստանի և հայերի համար, մենք ուզում ենք, որ մեր մեծերը նույնպես տեսնեն այն հրաշալի փոփոխությունները, որոնք ստեղծվում են մեր ջանասիրության և խանդավառության արդյունքում: Մենք ուզում ենք, որ մեծերը կարողանան տեսնել իրենց թոռնիկներին ու ծոռնիկներին: Իսկ ամենից առավել, մենք ուզում ենք պարգևել նրանց կյանքի գեղեցկությունը՝ ավելի լավ տեսուղության միջոցով: Եվ ո՞վ գիտե, գուցե ավելի լավ տեսողությամբ նրանք նույնպես կարողանան միանալ մեր առաքելությանը:

Բյուջե

ԻՆՉ	ՔԱՆԱԿ	Մ. ԱՐԺԵՔ ՀՀ ԴՐԱՄ	Մ. ԱՐԺԵՔ ԱՄՆ ԴՈԼԱՐ	ԸՆԴԱՄԵՆԸ ԱՄՆ ԴՈԼԱՐ
Ակնոց մեծահասակներին	660	3,000	$6.3	$4,158
Ակնոց երեխաներին	125	7,000	$14.8	$1,850
Բերդի աչքի ստուգումներ	120	2,000	$4.2	$504
Լանչ հետագա միջամտությունների ընթացում	20	2400	$5.0	$100
Ճանապարհածախս				$600
Ծրագրի ղեկավարում				$500

Փոխարժեք 1 ԱՄՆ դոլար = 475 ՀՀ դրամ

ԾՐԱԳՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐ **$7,712**